ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Օ Ր Ե Ն Ք Ը

Ընդունված է 2016 թվականի դեկտեմբերի 16-ին

ՓՐԿԱՐԱՐԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԿԱՆՈՆԱԳԻՐՔԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. Փրկարարական ծառայության կանոնագիրքը

1. Սույն կանոնագրքով կարգավորվում են փրկարարական ծառայության կազմակերպման և անցկացման, փրկարարական աշխատանքների և մարտական առաջադրանքների ղեկավարման ու իրականացման, տեղեկատվության հաղորդման կարգը, փրկարարական ծառայողների իրավունքները և պարտականությունները, խրախուսանքները, կարգապահական և նյութական պատասխանատվության ու դրանց կիրառման հետ կապված հարաբերությունները, ինչպես նաև ծառայության անցման հետ կապված այլ հարաբերություններ:

2. Սույն կանոնագրքի պահանջները տարածվում են արտակարգ իրավիճակների և քաղաքացիական պաշտպանության ոլորտի ~~հանրապետական գործադիր~~ **լիազոր** մարմնի (այսուհետ՝ լիազոր մարմին) համակարգում կամ կառավարման ոլորտում գործող բոլոր փրկարարական ստորաբաժանումների, այդ թվում՝ պետական ոչ առևտրային կազմակերպությունների, փրկարարական ստորաբաժանումների վրա:

3. Բացի սույն հոդվածի 2-րդ մասում նշված փրկարար ուժերից, սույն կանոնագրքի փրկարարական աշխատանքների կատարմանը վերաբերող պահանջները տարածվում են լիազոր մարմնի Փրկարար ծառայության ստորաբաժանումների հետ փրկարարական աշխատանքներ իրականացնող մասնագիտացված և կամավոր փրկարար ուժերի վրա:

4. Միևնույն կայազորի տարածքում տեղակայված լիազոր մարմնի Փրկարար ծառայության և Հայաստանի Հանրապետության զինված ուժերի ստորաբաժանումների միջև փոխհամագործակցության կարգը սահմանվում է լիազոր մարմնի ~~ու պաշտպանության բնագավառի հանրապետական գործադիր մարմնի ղեկավարների~~ **ղեկավարի ու պաշտպանության նախարարի** համատեղ հրամանով:

Հոդված 2. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը: